



ԳԵՂԱՐՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
ձեռքբերումները 2007-2011 թվականներին

ՀՏԴ 323 (479.25):36
ԳՄԴ 66.3 (2Յ) + 65.9 (2Յ) - 94
Գ 424

Գ 424 **Գեղարքունիք: Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի ձեռքբերումները 2007-2011 թվականներին.** - Եր.: Տնտես. բարեփոխ. վերլուծական - տեղեկ. կենտրոն, 2012. - 58 էջ:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Գեղարքունիքի մարզում առավել նկատելի ձեռքբերումները՝ տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերը, որոնց շնորհիվ մարզի տնտեսությունն ու հասարակությունը նշանակալի ձեռքբերումներ են ունեցել:

ՀՏԴ 323 (479.25) : 36
ԳՄԴ 65.3 (2Յ) + 65.9 (2Յ) - 94

ISBN 978-9939-9065-6-0

© Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն, 2012

Կազմին՝ Սուրեն Զիլինգարյան, Սպասող Նավակներ (1969)



Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ տպագրատանը
Տպաքանակը՝ 3000 օրինակ

Գեղարքունիք

Ծովագարդ գավառի՝ Գեղարքունիքի սրտում, ծովի մակերևույթից ավելի քան 1,800 մետր բարձրության վրա, երկնաբույր լեռների ափի մեջ, քսանութ գետերի գրկին, երկինքը երկնքին է նայում շուրջ քսանհինգ հազար տարի: Հայոց բնաշխարհի անկրկնելի շափյուղան՝ աշխարհում մեծությամբ երկրորդ բարձրադիր անուշահամ լիճ Սևա-նը, հայ ժողովրդի ծննդի, վերելքների ու անկումների, վերածննդի ու հարատևության մշտաբթուն վկան է: Գավառագետը, Արգիճին, Մարտունին, Կարճաղբյուրը, Մասրիկը, Ձկնագետն ու նրանց մեծ ու փոքր բույրերը սնում են Կովկասի լճերի թագուհու հիշողությունը, իսկ Հրազդանը՝ հինավուրց Իլդարունին, Գեղամա ծովի օրհնությունն ու եռանդը երակներում, գեղարքունյաց լեռների համբույրը հասցնում է հայոց մայր գետին:

Ամպերը համբուրում են Աժդահակի, Սպիտակասարի, Վարդենիսի ու Գեղասարի կատարները և Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի ու Սևանի լեռների լանջերին հորդում են ջինջ ու մեղրածոր աղբյուրներն ու խայտում փախչան ջրերը: Պարզկա գիշերներում նախանձում են աստ-

ղերը Ակնա լճի փայլին, ու Արևն իր թեքված պսակն է ուղղում Արմաղանի հայելում:

Ծովի տարեկիցն է մարդը ծովազարդ գավառում. հայն այստեղ հաստատվել է հազարամյակներ առաջ: Դարեր շարունակ Սևանա լճի խորունկ ջրերը հուսալիորեն պահպանել են նախահայրերի գաղտնիքը: Գաղտնապահ ջրերը սակայն մի օր հետ քաշվեցին մարդու կարճամտության և սերունդների հայացքին բացվեց քաղաքակրթության ծագման խորհուրդը: Լճաշենի հնավայրում դարավոր ջրերի գրկից ասես արարչի հրամանով ազատված դուրս ելան սայլ ու ռազմակառք, սլաք ու սափոր, կեռ ու կարաս, զարդ ու զենք: Դուրս ելան, որ խոսեն հին օրերում մարդու իղձերի ու մաքառման, ապրուստի ու բարքի, սիրո ու ատելության մասին:

Յեշտ չէ հասկանալ գեղարքունյաց պատմության ու մշակույթի կոթողների լեզուն. այստեղ կողք-կողքի խոսում են ժայռապատկերն ու կամուրջը, դամբարանն ու սահմանաքարը, սեպագիրն ու մագաղաթը, խաչքարն ու ամրոցը: Իրար հերթ չտալով խոսում են ուրարտական խրոխտությամբ ու հեզությամբ՝ գյուղերի շուրթերին բուսած մատուռ-


ների, խոսում են մեհենական խորհրդավորությամբ ու կայծակից կապտած քարին քարով քաշած պատկերների ուղղախոսությամբ: Խոսում են Խալդ աստծո հրամանով ու Տիրամոր պահապան աղոթքով: Պատմում են, ինչպես բարձրացավ Յինգ Զար ամրոցը, ինչպես ընկավ Իշտիկունին ու կանգնեց առյուծակերպ աստծո դուռը: Պատմում են, ինչպես հայոց Արտաշես արքան գյուղերի միջև հայոց պատմության մեջ առաջին հողաբաժանումն արեց այստեղ, ու իր «վարչատարածքային բարեփոխումները» հավերժացրեց սալերով: Պատմում են, ինչպես Շահ Աբբասի չար կամոք հայը քշվեց իր հողից, որ իր հմուտ ու աշխատասեր էությամբ ծաղկեցնի ուրիշի երկիրը, և թե ինչպես, դարեր անց, արարչի անիմանալի ճամփաներով Դարույնքի հովիտներից, Բայազետից ու Դիադինից, Մակուից և Ալաշկերտից հայը դարձավ ի շրջանս յուր ու վերահաստատվեց իր հողում: Դարձավ հայն իր հողին, որ ծաղկեցնի իրենն ու գորանա, որ օտարի զորությունն այլևս չկարենա իրեն բաժանել իր հողից: Եկավ, որ ապրի Լախնիների ավանդով ու սերունդներ ապրեցնի:

Մարդը


Գեղարքունիքի մարզի բնակչությունը 2002 թվականից ի վեր տարեց-տարի **ավելացել է**, ընդ որում, 2002-2011 թվականներին բնակչության թվաքանակի տարեկան փոփոխությունը Գեղարքունիքում ավելի բարձր էր, քան միջինը Հայաստանում: 2002-2011 թվականներին Հանրապետության բնակչությունն աճել է շուրջ երկու տոկոսով, մինչդեռ Գեղարքունիում նույն ժամանակահատվածում բնակչությունն ավելացել է շուրջ 2.3 տոկոսով:

Գեղարքունիքի մարզում ծնվածների թվաքանակը 2002 թվականից տարեց-

Բնակչության թվաքանակը Գեղարքունիքի մարզում (հազար մարդ)




Ծնվածների քանակը Գեղարքունիքի մարզում (հազար մարդ)



տարի սկսել է ավելանալ, իսկ դրան նախորդած ժամանակահատվածում ծնունդների թվի նվազումը փոխարինվել է աճով: 2011 թվականին Գեղարքունիքի մարզում ծնվել է **մեկ երրորդով ավելի** երեխա, քան 2001 թվականին:

Վերջին տասնամյակում Գեղարքունիքի մարզում աննախադեպ աճել է ծնելիությունը. 2010 թվականին հազար բնակչի հաշվով Գեղարքունիքում ծնվել է 60 տոկոսով ավելի երեխա, քան 2001 թվականին:

Ծնվածների բնակչի Գեղարքունիքի մարզում 1000 բնակչի հաշվով (մարդ)



2010 թվականին Գեղարքունիքի մարզում հազար բնակչի հաշվով ծնվել է **ավելի շատ** երեխա, քան միջինում հանրապետության քաղաքային կամ գյուղական համայնքներում և **ավելի շատ**, քան միջինում հանրապետությունում:


2010 թվականին Գեղարքունիքում բնակչության բնական աճը 2002 թվականի կրկնապատիկն էր:

Գեղարքունիքի մարզում, 2003 թվականից սկսած, տարեց-տարի **ավելացել է** բնակչության բնական աճը:

2011 թվականին Հայաստանում մահացության **ամենացածր** մակարդակը

Գեղարքունիքում էր. 2011 թվականին հազար բնակչի հաշվով Գեղարքունիքի մարզում մահացածների թիվը գրեթե մեկ տասներորդով ավելի պակաս էր, քան միջինում հանրապետությունում, ավելի ցածր, քան միջինում հանրապետության բաղաբային և գյուղական բնակավայրերում, **ավելի ցածր**, քան մայրաքաղաք Երևանում:

2011 թվականին Գեղարքունիքի մարզում մանկական մահացությունը 2001 թվականի համեմատ նվազել է շուրջ մեկ երրորդով:



2011 թվականին Գեղարքունիքի մարզում ստեղծվել են **60 տոկոսով ավելի** ընտանիքներ քան 2000 թվականին. գրանցվել է **530 ամուսնություն ավելի**:


Միաժամանակ, 2011 թվականին ամուսնալուծությունների թիվը Գեղարքունիքի մարզում 2007 թվականի համեմատ **նվազել է 15 տոկոսով**:

Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին տասը հազար բնակչի հաշվով ամուսնալուծությունների ամենացածր ցուցանիշը Գեղարքունիքում է:

2003 թվականից սկսած՝ Գեղարքունիքի մարզում տարեց-տարի **նվազել է** մեկնողների թիվը. 2010 թվականին Գեղարքունիքից մեկնել է կրկնակի պակաս

մարդ, քան 2002 թվականին: 2007 թվականի համեմատ՝ Գեղարքունիքից մեկտողների թիվը 2010 թվականին նվազել է 40 տոկոսով:


Գեղարքունիքի մարզից մեկտողների քանակը (մարդ)



Տնտեսության սյուները


Գեղարքունիքի մարզում 2011 թվականին նախորդ տարվա համեմատ **շոշափելիորեն աճել է** արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ ավելի քան 40 տոկոսով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը Գեղարքունիքի մարզում (ընթացիկ գներով, 33 դրամ)




Գեղարքունիքի մարզում արդյունաբերության տարբեր ճյուղերը զարգացել են **առավել համաչափ**, քան հանրապետության այլ մարզերում. 2011 թվականին Գեղարքունիքի մարզում հանքագործական արդյունաբերության արտադրանքը կազմել է արդյունաբերական համախառն արտադրանքի մեկ երրորդը, մշակող արդյունաբերության արտադրանքը՝ շուրջ 42 տոկոսը, իսկ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ծավալը՝ մեկ քառորդը:

Արդյունաբերության կառուցվածքը Գեղարքունիքի մարզում, 2011թ.



Մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը Գեղարքունիքի մարզում (մլն. դրամ)



2011 թվականին Գեղարքունիքի մարզում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի ար-

տաղիության և բաշխման ծավալն ընթացիկ գներով 2004 թվականի ծավալի կրկնապատիկն էր:

Նետճգնաժամային 2011 թվականին Գեղարքունիքի մարզում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է շուրջ մեկ հինգերորդով:

Գեղարքունիքը հանրապետության մարզերի թվում **երրորդն է** մանածագործական արտադրատեսակների արտադրության ծավալով՝ զիջելով միայն Սյունիքին և Շիրակին: Գեղարքունիքը հանրապետության մարզերի թվում **երրորդն է նաև** փայտանյութի մշակման, փայտից և խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրության ծավալով:

2011 թվականին Գեղարքունիքի մարզում գործել են շուրջ **85 արտադրական ձեռնարկություններ**, այդ թվում մարզի տնտեսության մեջ էական դերակատարում ունեցող Սոթքի ոսկու հանքը, **«Գողդեն Լենս»** ընկերությունը, **Սևանի հացի գործարանը**, **Վարդենիսի քարհանքը**, **Կատարողական սարքերի գործարանը**:

2010-2011 թվականներին Գեղարքունիքում գործել է **«Արեգակ»** ունիվերսալ վարկային կազմակերպությունը, որ մարզի հինգ տարածաշրջաններում բնակչությանը մատուցել է ֆինանսական բարձրակարգ ու հասանելի ծառայություններ:

Գեղարքունիքի մարզը հանրապետության գյուղատնտեսության առաջատարն է՝ երկրի շտեմարանը: 2011 թվականին Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 2001 թվականի համեմատ **եռապատիկ ավելի էր**: 2007-2011

2011 թվականին ձայաստանում գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեկ հինգերորդն ապահովել է Գեղարքունիքի մարզը, ավելի, քան հանրապետության որևէ այլ մարզ:

թվականներին՝ հինգ տարում, Գեղարքունիքի մարզում արտադրվել է ընթացիկ գներով **սույն ծավալի** գյուղատնտեսության համախառն արտադրանք, **որքան Նախորդ տասը տարիներին** միասին:

Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսական արտադրանքի ավելի քան երկու երրորդը բաժին է ընկնում բուսաբուծությանը, իսկ շուրջ մեկ երրորդը՝


Գյուղատնտեսության համախառն արտադրանքը Գեղարքունիքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2010 թվականին Գեղարքունիքի մարզում բուսաբուծության համախառն արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 2000 թվականի ծավալի գրեթե յոթնապատիկն էր և 2005 թվականի կրկնապատիկը:

անասնաբուծությանը: 2010 թվականին հանրապետության բուսաբուծության համախառն արտադրանքի ծավալի **ավելի քան մեկ հինգերորդն** արտադրվել է Գեղարքունիքում: 2007-2010 թվականներին՝ չորս տարում, Գեղարքունիքի մարզում ընթացիկ գներով արտադրվել է բուսաբուծության ավելի մեծ ծավալով արտադրանք, քան 1999-2006 թվականներին՝ նախորդ ութ տարիներին միասին:

Բուսաբուծության ծավալները Գեղարքունիքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)




1998-2010 թվականներին Գեղարքունիքի մարզը եղել և մնում է հանրապետությունում անասնաբուծության արտադրանքի անգերազանցելի **առաջատարը**: 2010 թվականին Գեղարքունիքի մարզում անասնաբուծության համախառն արտադրանքն ընթացիկ գներով 2001 թվականի համեմատ կրկնապատկվել է:


2010 թվականին Գեղարքունիքի մարզում է արտադրվել հանրապետությունում անասնաբուծության համախառն արտադրանքի մեկ վեցերորդը:

Գեղարքունիքի մարզը հանրապետության հացի շտեմարանն է: Հայաստանում հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի ցանքատարածությամբ

Անասնաբուծության ծավալները Գեղարքունիքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Անասնաբուծության ծավալները
ՀՀ մարզերում, 2010թ.




յունների **յուրաքանչյուր չորս հեկտարից մեկը** մշակվում է Գեղարքունիքի մարզում, ավելի շատ, քան հանրապետության այլ վեց մարզերում միասին:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Գեղարքունիքի մարզի գյուղացիական տնտեսություններին տրամադրված բազմակողմանի աջակցության արդյունքում **նկատելիորեն բարձրացել է** հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի բերքատվությունը:


2011 թվականին Հայաստանում հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի բերքի շուրջ **30 տոկոսն արտադրվել է** Գեղարքունիքի մարզում՝ ավելի, քան հանրապետության այլ վեց մարզերում միասին: 2007-2011

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցան-
քատարածությունները Գեղարքունիքի մարզում (հա)



2010-2011 թվականներին՝ երկու տարում, Գեղարքունիքի մարզում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի բերքը կազմել է նույնքան, որքան 2006 թվականին ողջ հանրապետությունում:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույ-
սերի համախառն բերքը ՀՀ մարզերում, 2010թ.




թվականներին՝ հինգ տարում, Գեղարքունիքի մարզում ստացվել է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի **նույնքան բերք**, որքան 1995-2006 թվականներին՝ **տասներկու տարում**: 2011 թվականին Գեղարքունիքի

մարզում հացահատիկային և հատիկաղնդեղային մշակաբույսերի բերքը, (126.7 հազար տոննա), 2003 թվականի **կրկնապատիկն էր**:

Հայաստանում կարտոֆիլի ցանքատարածությունների գրեթե կեսը Գեղարքունիքի մարզում են՝ շուրջ 13.5 հազար հեկտար:

2011 թվականին Գեղարքունիքի մարզում կարտոֆիլի ցանքատարածությունները նախորդ տասնամյակում 2000 թվականի համեմատ ավելացել են մեկ երրորդով:

Կարտոֆիլի ցանքատարածությունները ՀՀ մարզերում, 2010թ.



Գեղարքունիքում է արտադրվում հանրապետությունում կարտոֆիլի բերքի **ավելի քան 45 տոկոսը**: 2011 թվականին Գեղարքունիքի մարզում կարտոֆիլի բերքը երեք քառորդով ավելի էր, քան 2002 թվականին:

Միայն 2008 թվականին Գեղարքունիքի մարզում ստացվել է կարտոֆիլի նույնքան բերք, որքան 2000 թվականին ողջ հանրապետությունում:


Գյուղատնտեսության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության հոգածության և ջանքերի շնորհիվ Գեղարքունիքի մարզում տա-

2011 թվականին գեղարքունիքցին 2000 թվականի համեմատ մեկ հեկտարից ստացել է կարտոֆիլի կրկնակի ավելի բերք:

րեց-տարի բարձրացել է կարտոֆիլի բերքատվությունը. 2011 թվականին Գեղարքունիքի մարզում կարտոֆիլի **բերքատվությունն աննախադեպ բարձր էր՝** հեկտարից շուրջ 19 տոննա:

2011 թվականին Գեղարքունիքի մարզում մշակվել է բանջարանոցային մշակաբույսերի գրեթե **45 տոկոսով ավելի** ընդարձակ ընդհանուր ցանքատարածություն, քան 2001 թվականին: 2011 թվականին հանրապետությունում բանջարանոցային մշակաբույսերի երրորդ **ամենաընդարձակ** ցանքատարածությունները Գեղարքունիքի մարզում էին՝ զիջելով միայն Արարատյան դաշտավայրին:

Բանջարանոցային մշակաբույսերի միջին բերքատվությունը 33 մարզերում, 2010թ. (գ/հա)



Բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությամբ ևս Գեղարքունիքի մարզը հանրապետությունում զիջում է միայն Արարատյան դաշտավայրին: Բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունը Գեղարքունիքի մարզում 2008-2011 թվականներին աննախադեպ ավելացել է, այդ թվում՝ գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված 3այաստանի 3անրապետության կառավարության ջանքերի և գյուղացիական տնտեսություններին համակողմանի աջակցության շնորհիվ: 2011 թվականին


Գեղարքունիքում գյուղատնտեսները ստացել են բանջարանոցային մշակաբույսերի **երկու անգամ ավելի շատ** բերք, քան 2001 թվականին:

2007-2011 թվականներին՝ հինգ տարում, Գեղարքունիքի մարզում ստացվել է բանջարանոցային մշակաբույսերի ավելի շատ բերք, քան 1998-2005 թվականներին՝ ութ տարում միասին:

2011 թվականին Գեղարքունիքի մարզում պտղի և հատապտղի տնկարկների տարածությունները 2003 թվականի համեմատ **ընդարձակվել են** ավելի քան մեկ հինգերորդով:

Թեպետ պտղի և հատապտղի տնկարկների տարածությունները Գեղարքունիքի մարզում հանրապետության այլ մարզերի համեմատ մեծ չեն, այդուհանդերձ, Գեղարքունիքի տնկարկների բերքատվությունն ամենամեծն է հանրապետությունում. մեկ հեկտար տնկարկներից Գեղարքունիքում գյուղատնտեսները ստանում են **ավելի շատ բերք**, քան ստանում են մեկ հեկտարից հանրապետության յոթ մարզերում և մայրաքաղաք Երևանում միասին: 2007-2011 թվականներին Գեղարքունիքի մարզում պտղի և հատապտղի տնկարկների բերքատվությունն **աննախադեպ աճել է**. 2010 թվականին տնկարկների մեկ հեկտարից գյուղատնտեսները Գեղարքունիքում **հավաքել են երկուսուկես անգամ ավելի շատ բերք**, քան 2002 թվականին:


Պտղի և հատապտղի միջին բերքատվությունը 33 մարզերում, 2010թ (g/հա)



2011 թվականին Գեղարքունիքի մարզում պտղի և հատապտղի բերքն **անսխառնեպ բարձր էր՝ 23.3** հազար տոննա, **հնգապատիկ ավելի**, քան 2001 թվականին և **կրկնակի ավելի**, քան 2004 թվականին: Թեպետ Գեղարքունիքի մարզում պտղի և հատապտղի տնկարկների տարածությունները հանրապետությունում տնկարկների տարածությունների չորս տոկոսն անգամ չեն կազմում, այդուհանդերձ Հայաստանում պտղի և հատապտղի բերքի **մեկ տասնեորդը** հավաքում են Գեղարքունիքում:

1998-2010 թվականներին Գեղարքունիքի մարզում էր հանրապետությունում խոշոր եղջերավոր անասունների ամենամեծ գլխաքանակը:

Գեղարքունիքի բաժինը ՀՀ մարզերում խոշոր եղջերավոր անասունների թվաքանակում, 2011թ.




Հայաստանում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի մեկ վեցերորդը Գեղարքունիքի մարզում է: 2010 թվականին Գեղարքունիքի մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2000 թվականի համեմատ **ավելացել է** մեկ հինգերորդով:

1998-2011 թվականներին Գեղարքունիքի մարզում էր Հայաստանում կովերի **ամենամեծ գլխաքանակը**: 2011 թվականին հանրապետությունում կովերի գլխաքանակի մեկ հինգերորդը բուծվել է Գեղարքունիքում: 2001-2011 թվա-

կաններին կովերի գլխաքանակը Գեղարքունիքի մարզում **ավելացել է 15 տոկոսով**:

Գեղարքունիքի բաժինը ՀՀ մարզերում կովերի թվաքանակում, 2011թ.



2001-2011 թվականներին Գեղարքունիքի մարզում խոզերի գլխաքանակն **ավելացել է շուրջ 90 տոկոսով**:

Հայաստանում ոչխարների և այծերի ամենամեծ գլխաքանակը Գեղարքունիքի մարզում է. շուրջ 91 հազար գլուխ՝ յուրաքանչյուր վեցերորդ գլուխը հանրապետությունում:


1998 թվականից ի վեր, Գեղարքունիքի մարզում իրացվել է **ավելի մեծ** քաշով անասուն և թռչուն, քան հանրապետության այլ մարզում: Գեղարքունիքի մարզում է իրացվել Հայաստանում իրացված անասունի կամ թռչնի յուրաքանչյուր վեցերորդ տոննան: 2011 թվականին Գեղարքունիքում իրացվել է **մեկուկես անգամ ավելի** մեծ քաշով անասուն և թռչուն, քան 2002 թվականին:

2011 թվականին Գեղարքունիքում է արտադրվել Հայաստանում արտադր-

Գեղարքունիքի մարզը Հայաստանում թիվ մեկ կաթնարտադրողն է. 1998-2011 թվականներին Գեղարքունիքում արտադրվել է ավելի մեծ ծավալով կաթ, քան հանրապետության այլ մարզում:

ված կաթի շուրջ մեկ հինգերորդը: 2011 թվականին Գեղարքունիքի մարզում 2003 թվականի համեմատ արտադրվել է մեկ քառորդով ավելի կաթ:


Գեղարքունիքի բաժինը 33 մարզերի կաթի արտադրության ընդհանուր ծավալում, 2011 թ.



2003-2010 թվականներին Գեղարքունիքի մարզում հավկիթի արտադրությունը կրկնապատկվել է:

Գեղարքունիքը նաև հանրապետությունում բրդի ամենամեծ արտադրողն է: 2010 թվականին Հայաստանում արտադրված բրդի յուրաքանչյուր հինգերորդ տոննա արտադրվել է Գեղարքունիքում:

Հավկիթի արտադրությունը Գեղարքունիքի մարզում (մլն. հատ)





Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը և Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանը՝ աշխատանքային քննարկման ընթացքում

2007-2011 թվականներին Գեղարքունիքի մարզի ավելի քան **30 համայնքներում** հիմնանորոգվել են ոռոգման ջրատարեր և ջրահավաք ավազաններ, մաքրվել, նորոգվել և վերականգնվել են ոռոգման և կոլեկտորադրենաժային ցանցեր, ջրարբիացման համակարգեր, կառուցվել են երրորդ կարգի ջրանցքներ և պոմպակայաններ, հորատվել են խորքային հորեր:

2010-2011 թվականներին **Մեծ Մասրիկի** ինքնահոս համակարգի գործարկման արդյունքում **Վարդենիս, Շատջրեք, Շատվան, Մեծ Մասրիկ** համայնքներում ոռոգելի տարածություններն ընդհանուր առմամբ ընդարձակվեցին շուրջ **2,000 հեկտարով**: Ոռոգման ինքնահոս համակարգի շուրջ **9,400 մետր** երկարությամբ համակարգի 5 կիլոմետր հատվածն ամբողջությամբ նորացվել է, **4,400 մետրը**՝ վերանորոգվել:

2011 թվականին գործարկվեցին **Չոլաքար** և **Մարտունի** համայնքների վերակառուցված պոմպակայաններն ու ինքնահոս համակարգը, որոնք գտնվում են **«Սևան» ազգային պարկում** և սնուցվում են **Սևանա** լճի ջրով: Լճի մակարդակի տատանումների հետևանքով առաջացող խնդիրները լուծելու նպատակով **Չոլաքարում** կառուցվել է երկրորդ աստիճանի պոմպակայանի նոր շենք, իսկ **Մարտունիում** վերակառուցվել է պոմպակայանի նախկին շենքը: Կատարված աշխատանքները, մասնավորապես, ներառում են խորասուզվող պոմպերի տեղադրում, պոմպակայանի կառավարման ավտոմատացման համակարգերի ներդրում, միջին և ցածր լարման էլեկտրասարքերի փոխարինում:



Շովասար գյուղի կենտրոնում միանգամից երեք նորակառույցների հայտնվելը գյուղացիների պարծանքն է դարձել: Դպրոց, բուժամբուլատորիա, մշակույթի տուն՝ երեք կարևորագույն կենտրոններ: Շովասարցի Շահեն Կակոյանն ասում է, որ եթե առաջ իրենց մոռացված էին համարում, հիմա հասկանում են, որ երկրում ամեն ինչ հերթով է կատարվում ու հերթն իրենց էլ է հասել: «Երեխեքն արդեն նոր սարքած դպրոցը դասի կերթան, մենք զբաղվելու տեղ ունինք, էլ փողոցում չենք հավաքվում, գալիս ենք բիլիարդ ու թենիս ենք խաղում:Էջ Ամբուլատորիան էլ մեծ օգնություն էր մեր գյուղին: Առաջ Մարտունի կհասնեինք ամեն հասարակ բանի համար, բայց հիմի արդեն թեկուզ վերցնենք մեր գյուղացիներից, ով շաքարով հիվանդ է, իրա դեղերն Էստեղից Է ստանում»:

Արդյունքում շուրջ ինը հազար ջրօգտագործողներ հնարավորություն ունեն օգտվելու հուսալի ոռոգումից շուրջ **800 հեկտար** հողատարածքի վրա՝ մեկ հինգերորդով ավելի, քան նախքան ոռոգման համակարգի վերագործարկումը:

Ընդհանուր առմամբ միայն 2011 թվականին ոռոգելի հողերը մարզում ավելացել են ավելի քան **1,230 հեկտարով** և կազմել ավելի քան **9,700 հեկտար**: 2011 թվականին համայնքների գյուղացիական տնտեսություններին է տրվել ավելի քան **5 միլիոն խորանարդ մետր** ոռոգման ջուր, վարձավճարների գանձումը կատարվել է 90 տոկոսով:

2012 թվականի տարեսկզբից Գեղարքունիքում գործում է կաթի վերամշակման տասնմեկ և մսի վերամշակման երկու կետ:

2011 թվականին **Վահան, Լիճք, Գեղիհովիտ, Ախպրածոր, Սարուխան, Փանձակ, Ճամբարակ, Նորատուս, Աղբերք, Վարդածոր, Շորժա, Ավազան** համայնքները ձեռք են բերել անվավոր տրակտորներ:


2010-2011 թվականներին Գեղարքունիքում համայնքներում պատվաստվել է անասունների որջ գլխաբանակը, արդյունքում կանխվել է ճամբարակի տարածքում անասունների դաբաղ հիվանդության տարածումը: Միայն 2010 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունը համայնքներին է հատկացրել ավելի քան **100 միլիոն դրամի** բուժանյութ:

2010 թվականին Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսներին տրամադրվել է շուրջ երկու տոննա ցինկի ֆոսֆիդ՝ մկնանման կրծողների դեմ պայքարի նպատակով:

Գեղարքունիքի մարզում 2010 թվականին իրականացված շինարարական աշխատանքների համախառն ծավալն ընթացիկ գներով 2004 թվականի ծավալի գրեթե **վեցապատիկն է** և **երկուսուկես անգամ գերազանցում է** նախաճգնաժամային 2007 թվականին իրականացված շինարարական աշխատանքների ծավալը: 2009-2010 թվականներին՝ երկու տարում,

Գեղարքունիքի մարզում իրականացված շինարարական աշխատանքների ծավալն ընթացիկ գներով գերազանցել է 1998-2005 թվականներին՝ ութ տարում կատարված շինարարական աշխատանքների ծավալը:


Շինարարության ծավալները Գեղարքունիքի մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



2007-2010 թվականներին՝ չորս տարում, Գեղարքունիքի մարզում գործարկված հիմնական միջոցների ծավալն ընթացիկ գներով **գերազանցում է** 1998-2006 թվականներին՝ ինը տարում գործարկված ծավալը:

2009-2010 թվականներին՝ երկու տարում, Գեղարքունիքի մարզում իրականացված շինմոնտաժային աշխատանքների ծավալն ընթացիկ գներով **գերազանցել է** 1998-2005 թվականներին՝ ութ տարում իրականացված շինմոնտաժային աշխատանքների ծավալը:


Շինմոնտաժային աշխատանքների ծավալները Գեղարքունիքի մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



Գեղարքունիքի մարզում 2011 թվականին առևտրի շրջանառության ծավալը կազմել է 2004 թվականի կրկնապատիկը: Խանութների շրջանառության մեծացմանը գուզընթաց,

2011 թվականին Գեղարքունիքի մարզում խանութների շրջանառությունը 2003 թվականի համեմատ կրկնապատկվել է, իսկ նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ՝ ավելացել շուրջ 30 տոկոսով:


Խանութներում առևտրի շրջանառության ծավալները Գեղարքունիքի մարզում (մլն. դրամ)



Գեղարքունիքի մարզում աստիճանականորեն կրճատվել է կրպակների թիվը, ինչը վկայում է մարզում սպասարկման և ծառայությունների որակի ավելի բարձր չափանիշների հաստատման մասին: 2011 թվականին Գեղարքունիքում գործում էր երեք անգամ ավելի քիչ կրպակ, քան 1998 թվականին և մեկ քառորդով պակաս, քան 2003 թվականին:

2011 թվականին Գեղարքունիքի մարզում միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը կրկնակի ավելի էր, քան 2004 թվականին և մեկուկես անգամ ավելի, քան նախաճգնաժամային 2006 թվականին:

Միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը Գեղարքունիքի մարզում (հազ. դրամ)




2011 թվականին Գեղարքունիքի մարզում ծառայությունների ծավալը նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ **ավելացել է** երկու երրորդով, իսկ 2009 թվականի համեմատ՝ 15 տոկոսով:

2010 թվականին Գեղարքունիքի մարզում կրթության ծառայությունների ծավալը 2004 թվականի համեմատ **ավելացել է կրկնակի**, իսկ 2007 թվականի

Գեղարքունիքի մարզում 2000-2011 թվականներին արտահանման ծավալն ավելացել է քսանհինգապատիկ:


Շառայությունների ծավալը Գեղարքունիքի մարզում (մլն. դրամ)



համեմատ՝ 30 տոկոսով:

2011 թվականին Գեղարքունիքի մարզում արտահանման ծավալը 2006 թվականի համեմատ իննսպատիկ է, իսկ նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ ավելացել է եռապատիկ:

Գեղարքունիքի մարզից արտահանման ծավալները (հազ. ԱՄՆ դոլար)



2010 թվականին Գեղարքունիքի մարզի արտահանման ծավալները գերազանցել են հարևան Թուրքիայի մի շարք սահմանամերձ նահանգների արտահանման ընդհանուր ծավալները, մասնավորապես՝ Կարս, Թունջելի և Էրզինջան (Երզնկա) նահանգներինը միասին:

Ենթակառուցվածքները

Գեղարքունիքի մարզում 2010-2011 թվականներին 2G և գերժամանակակից 3G+ տեխնոլոգիաներով համալրված ծածկույթը հասանելի է դարձել բնակչության համար: 2011 թվականին «Արմեն-Տել» ընկերության Hi-Line ծառայությունը հասանելի դարձավ ճամբարակում: 2012 թվականին «ԶԻ-ԷՆ-ՍԻ-ԱԼՖԱ» ընկերության հաղորդակցության ցանցին միացված էին Գավառ, Մարտունի, Սևան քաղաքները:

Գեղարքունիքի մարզում 2007-2011 թվականներին կատարված կապիտալ ներդրումների շուրջ մեկ քառորդն ուղղվել է ճանապարհաշինությանը:

2007-2011 թվականներին հիմնանորոգվել են **Աստղածոր, Վարդածոր, Ծովասար, Լճաշեն, Գեղաքար, Կուտական, Կարճաղբյուր, Դրախտիկ, Զորագյուղ** համայնքները միջպետական մայրուղիներին, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին կապող հատվածները, հիմնանորոգվել է **Վարդենիս-Գեղամասար** ճանապարհը,

Երևան - Լճաշեն հիմնանորոգված մայրուղին



Կարմիրգյուղի կամուրջը, հիմնանորոգվել են ներհամայնքային ճանապարհներ **Մարտունի, Գեղարքունիք, Վարդենիս, Ճամբարակ** համայնքներում:

2010 թվականին **Դպրաբակ** համայնքի ճանապարհի հատվածում կառուցվել է 42 մետր թռիչքով կամուրջ, **Թթուջուր** համայնքում հիմնանորոգվել է համայնքային նշանակության կամուրջ: Միայն 2011 թվականին հիմնանորոգվել են շուրջ 46 կիլոմետր երկարությամբ տարբեր նշանակության ավտոճանապարհներ, մեկ կամուրջ և չորս փլվածքներ:


2011 թվականին շահագործման հանձնվեց **Անտառամեջ-Ձորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք** 33.5 կիլոմետր ընդհանուր երկարությամբ լիովին վերականգնված ավտոճանապարհը:

2011 թվականին շահագործման հանձնվեց նաև **Սևան-Մարտունի-Գետափ** ճանապարհը. կատարվել են հիմնանորոգման ու ավիապաշտպան աշխատանքներ, 3,400 մետր երկարությամբ տեղադրվել են մետաղյա արգելապատնեշներ, կատարվել են նաև ճանապարհային պաստառների ամրացման աշխատանքներ:

Գեղարքունիքի մարզում 2011 թվականին գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը 2000 թվականի համամետ **կրկնակի ավելի էր**: Նախորդ տասնամյակում գազամատակարարման ցանցը **նշանակալի տեմպով զարգացել է** Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքներում. 2011 թվականին Գեղարքունիքի գյուղական համայնքներում գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը 2002 թվականի համեմատ **կրկնապատկվել է**: 2011 թվականին հանրապետության գյուղական համայնքներում գազամատակարարման ցանցի երկարությամբ Գեղարքունիքը Զայաստանի առաջատար երեք մարզերի թվում էր:

2010 թվականին Գեղարքունիքի մարզում գազամատակարարման գործող ցանցի երկարությունը **գերազանցում էր գազի բաշխիչ գործող ցանցի երկարությանը ԱՊՀ մի շարք երկրներում, ինչպես նաև տարածքով, բնակչությամբ և կենսամակարդակով Գեղարքունիքի մարզին զգալիորեն գերազանցող մի շարք պետություններում, մասնավորա-**


Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Գեղարքունիքի մարզում (կմ)



պես, Կիպրոսում, Ֆիլիպիններում, Լիբանանում, Սինգապուրում, Իսրայելում, Ֆինլանդիայում, Շվեդիայում, Սլովենիայում, Էստոնիայում, Մակեդոնիայում, Տայվանում և մի շարք այլ երկրներում:

Եթե 2002 թվականին Գեղարքունիքի մարզում գազաֆիկացված էր երեք բնակարանից և բնակելի տնից մեկը, ապա 2011 թվականի տարեկան յուրաքանչյուր չորս բնակարանից և բնակելի տնից երեքը: 2011 թվականի տարեկան Գեղարքունիքում գազաֆիկացված էր ավելի քան **43,600 բնակարան և բնակելի տուն**՝ կրկնակի ավելի, քան 2002 թվականին, իսկ մարզի

Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը Գեղարքունիքի մարզում (միավոր)




բաղաբային համայնքներում Նույն ժամանակահատվածում գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակն **ավելացել է երկուսուկես անգամ:**

Նախորդ տասնամյակում Գեղարքունիքի մարզում **նշանակալիորեն ավելացել է** սպառողներին մատակարարված գազի ծավալը: Նույն ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքներում սպառողներին մատակարարված գազի ծավալն **ավելացել է հինգուկես անգամ:**

2010 թվականին Գեղարքունիքում սպառողներին մատակարարվել է եռապատիկ ավելի ծավալով բնական գազ, քան 2001 թվականին:

Բոլոր սպառողներին բաց թողնված գազը Գեղարքունիքի մարզում (մլն. խմ)



2007-2011 թվականներին Գեղարքունիքի մարզում գազաֆիկացման կապիտալ աշխատանքներ են կատարվել **Սևան, Ճամբարակ, Լուսակունք, Տորֆավան, Սեմյոնովկա, Դրախտիկ, Շատչրեք, Վահան և Արտանիշ** համայնքներում:

2008-2009 թվականներին **Լանջաղբյուր** գյուղում կառուցվել է շուրջ 380 մետր, իսկ Վարդաձոր համայնքում՝ ավելի քան **670 մետր գազատար:**

2010-2011 թվականներին Գեղարքունիքի մարզում կառուցվել և տրոգվել է ավելի քան յոթուկես կիլոմետր ընդհանուր երկարությամբ գազատար:

Գեղարքունիքի մարզում 2010 թվականին խմելու ջրի ջրատարերի երկարությունը 2001 թվականի համեմատ **ավելի էր** յոթ տոկոսով:

2002-2010 թվականներին Գեղարքունիքի մարզում ջրամատակարարման ցանցում կատարված աշխատանքների և կառավարման ավելի արդյունավետ համակարգերի ներդրման արդյունքում **կրճատվել են** խմելու ջրի կորուստները. 2010 թվականին Գեղարքունիքում սպառվել է եռապատիկ քիչ ծավալով խմելու ջուր, քան 2002 թվականին:

2010 թվականին Գեղարքունիքի մարզում կոյուղու համակարգի փողոցային ցանցի երկարությունը մեկ վեցերորդով **ավելի էր**, քան 2006 թվականին:

2007-2011 թվականներին Գեղարքունիքի մարզի **քաղաքային երկու և ավելի քան քսանհինգ** գյուղական համայնքներում կառուցվել և հիմնանորոգվել են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր:

2008-2009 թվականներին **Վերին Գետաշեն** համայնքում վերանորոգվել է 820 մետր, իսկ **Վաղաշեն** գյուղում՝ ավելի քան 1,000 մետր խմելու ջրի մատակարարման ջրագիծ:


2010-2011 թվականներին Գեղարքունիքի համայնքներում կառուցվել և հիմնանորոգվել է շուրջ 65 կիլոմետր ջրագիծ, կատարվել են ավելի քան 1.3 միլիարդ դրամ ընդհանուր ծավալով աշխատանքներ:

2011 թվականին **Սևան, Գավառ, Մարտունի և Վարդենիս** քաղաքներում կառուցվել է 22 կմ կոյուղագիծ: 2012 թվականին Գերմանական **«Լյուդվիգ Պֆեյֆեր»** ընկերությունը կավարտի **Գավառ, Մարտունի և Վարդենիս** քաղաքներում կոյուղաջրերի մաքրման կայանների կառուցման և կոյուղացանցերի վերանորոգման աշխատանքները՝ շուրջ չորս միլիարդ դրամ ընդհանուր ծավալով՝ 2007-2011 թվականներին Գեղարքունիքի մարզում կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի շուրջ մեկ վեցերորդը:

Գեղարքունիքի մարզում 2010 թվականին քաղաքների փողոցների և անցումների ընդհանուր երկարությունը 2001 թվականի համեմատ **ավելացել է 30 տոկոսով**: Նույն ժամանակահատվածում Գեղարքունիքի քաղաքների բարեկարգված փողոցների և անցումների երկարությունն ավելացել է մեկ երրորդով:

2003-2010 թվականներին շուրջ մեկ հինգերորդով **ավելացել է** Գեղարքունիքի քաղաքային համայնքներում փողոցների, անցումների և հրապարակների ընդհանուր մակերեսը:

Բարեկարգված փողոցների, անցումների և հրապարակների ընդհանուր մակերեսը Գեղարքունիքի մարզում (հազ. բմ)



2007-2011 թվականներին Գեղարքունիքի քաղաքային երկու և գյուղական յոթ համայնքներում իրականացվել են ծավալուն ափապաշտպան աշխատանքներ. նշված ժամանակահատվածում հանրապետության մարզերում ափապաշտպան աշխատանքներին ուղղված կապիտալ միջոցների շուրջ մեկ հինգերորդը հատկացվել է Գեղարքունիքի մարզին:

2007-2011 թվականներին Գեղարքունիքի մարզի **Գավառ, Մարտունի, Սարուխան, Նորակերտ, Գանձակ, Դարանակ, Փամբակ, Ներքին Գետաշեն** համայնքներում մաքրվել է հեղեղատարերի հունը, հարթեցվել և ամրակապվել գետերի հունը, վերականգնվել են սելավատարերի պատերը:

Սևանա լճի մակարդակի բարձրացմանն ուղղված Հայաստանի



«Ձկների մոտավորապես 60 տոկոսը վերադառնում է Սևան: Եվ սա միայն առաջին փուլն է: **Պարույր Յակոբյան, «Արփա Սևան» ԲԲԸ տնօրեն**

Հանրապետության հետևողական ջանքերի արդյունքում 2002-2011 թվականներին Սևանա լճի մակարդակը բարձրացել է **գրեթե չորս մետրով**, ինչն անսխաղեպ է տարածաշրջանում. լճի ամենաբարձր նիշը 2011 թվականին կազմել է 1900 մետր 50 սմ, իսկ 2012 թվականի տարեսկզբին ավելի քան 1900 մետր:

2011 թվականին Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով Գեղարքունիքի ջրածածկված և ջրածածկման ենթակա անտառամերձ տարածքներում **մաքրվել և հեռացվել է 275 հեկտար ծառաթփայլին բույս, ապամոնտաժվել շենք-շինություն, տեղափոխվել ջրածածկման ենթակա ենթակառուցվածք:**

2010-2011 թվականներին Սևանա լճի ձկնային պաշարների համալրման նպատակով լիճ է թողնվել **գեղարքունի և ամառային իշխանի տեսակների շուրջ մեկուկես միլիոն մանրածուկ:**

2011 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Սևան ազգային պարկում առանձնացված երկու հանրային լողափների շինարարության նպատակով հատկացրել է **62 միլիոն դրամ**: Հանրային լողափում անվճար գործում են ավտոկանգառը, մանկական և սպորտային խաղահրապարակները, զուգարանները, բուժկետը: Բնակիչները լողափից օգտվելու մուտքի վճար չեն մուծում, գործում են նաև փրկարար ծառայություն, սննդի կազմակերպման կետեր: Հանրային լողափում տեղադրված է խմելու ջրի երեք ծորակ, բացառությամբ գարեջրից՝ ոգելից խմիչքների վաճառքն արգելված է: 2011 թվականի ամառային ամիսներին շուրջ **100 հազար մարդ է այցելել** լողափեր. դրանք միաժամանակ կարող են սպասարկել **1,000-1,500 այցելուի**: 2012 թվականին Սևանի ափին հանրային երրորդ լողափը կբացվի Լճաշեն համայնքի տարածքում: Միջնաժամկետ հատվածում լճի ափին կստեղծվի **65 հանրային լողափ**:



«Գիշեր ու գոր մինչև սեզոնի վերջ՝ սեպտեմբերի կեսերը հերթապահություն է լինելու՝ 2 կետով, 6 աշխատակիցների կողմից, ինչը լիովին բավարար է տվյալ տարածքում մարդկանց անվտանգությունը ապահովելու համար»:

Սամվել Մկրտչյան, ԱԻՎ նախարարության փրկարար ծառայության աշխատակից, գնդապետ



Գերժամանակակից տեխնիկան՝ Սևանա լճի մաքրման աշխատանքներում




Տունը


Գեղարքունիքի մարզում 2011 թվականին բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը 2001 թվականի համեմատ **ավելացել է** շուրջ մեկ քառորդով: Նույն ժամանակահատվածում Գեղարքունիքի գյուղական համայնքներում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսն ավելացել է շուրջ մեկ երրորդով:

2011 թվականին հանրապետության քաղաքային համայնքներում ընդհա-

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը Գեղարքունիքի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերում (հազ. բմ)



Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով ՀՀ մարզերում, 2011թ. (բմ)



Նուր մակերեսով մեկ բնակչի ապահովվածությամբ՝ շուրջ 34 քմ, Գեղարքունիքի մարզը գիշում էր միայն Արագածոտնին:

2011 թվականին Գեղարքունիքում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով 2000 թվականի համեմատ կրկնապատկվել է, իսկ մարզի քաղաքային համայնքներում, Նույն ժամանակահատվածում, մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով ավելացել է գրեթե երեքուկես անգամ:

2011 թվականին բազմաբնակարանային շենքերի բնակարանների քանակը Գեղարքունիքի մարզի քաղաքային բնակավայրերում 2002 թվականի համեմատ **ավելացել է** շուրջ ութ տոկոսով, իսկ գյուղական բնակավայրերում՝ ավելի քան մեկ քառորդով: Նույն ժամանակահատվածում Գեղարքունիքի գյուղական համայնքներում բնակելի տների (առանձնատների) ընդհանուր մակերեսն ավելացել է մեկ երրորդով:

2010 թվականին Գեղարքունիքի մարզում բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2000 թվականի համեմատ **ավելացել է կրկնակի**: Նույն ժամանակահատվածում Գեղարքունիքում բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն ավելացել է գրեթե **յոթապատիկ**:

2010 թվականին Գեղարքունիքի մարզում հողերի, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության, առուվաճառքի գործարքների քանակը 2002 թվականի համեմատ շուրջ յոթ անգամ ավելի էր:

2007-2011 թվականներին Գեղարքունիքի **բոլոր քաղաքային համայնքներում** վերանորոգվել են բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ: Այգուտ համայնքում սողանքի պատճառով բնակարանից զրկված բնակիչներին տրամադրվել է 15 տևակ: **Թթուշուր** համայնքի մի շարք բնակիչների բնակարանների վերանորոգման նպատակով օժանդակություն է տրամադրվել:

Աշխատանքն ու վարձատրությունը

Գեղարքունիքի մարզում տարեց-տարի **ավելացել է** աշխատողների վարձատրության մակարդակը: 2002-2010 թվականներին Գեղարքունիքում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը **քառապատկվել է**: 2010 թվականին Գեղարքունիքում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 2005 թվականի կրկնապատիկն էր, իսկ 2008 թվականի համեմատ՝ ավելացել է մեկ քառորդով:

Աշխատողների միջին անվանական աշխատավարձը Գեղարքունիքի մարզում (հազ. դրամ)



Աշխատատեղերի ստեղծման և զբաղվածության աստիճանական ընդլայնման արդյունքում Գեղարքունիքի մարզում տարեց-տարի, ընդհուպ մինչև 2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամը, կրճատվել է չզբաղված, այդ թվում՝ գործազուրկ քաղաքացիների թիվը. 2007 թվականին Գեղարքունիքում տնտեսության մեջ չզբաղված քաղաքացիների թիվը 2002 թվականի համեմատ **կրճատվել էր 45 տոկոսով**: Ճգնաժամի հետևանքով գործազրկության մակարդակը Գեղարքունիքում որոշակիորեն աճել էր, սակայն արդեն 2010 թվականին մարզում չզբաղվածների թիվը չէր գերազանցում նախաճգնաժամային ցուցանիշը:

Գեղարքունիքիցների երեք քառորդից ավելին աշխատում է գյուղատնտեսության, իսկ շուրջ մեկ հինգերորդը՝ ծառայությունների ոլորտում: 2006-2010

թվականներին Գեղարքունիքի մարզում շինարարության ոլորտում զբաղվածների թիվը **կրկնապատկվել է**:

Գեղարքունիքի մարզում տարեց-տարի ավելացել է զբաղվածների ներգրավումը տնտեսության ոչ պետական հատվածում. եթե 2002 թվականին Գեղարքունիքում ոչ պետական հատվածում աշխատում էր զբաղվածների շուրջ 84 տոկոսը, 2010 թվականին աշխատում էր արդեն 88 տոկոսը:


2010-2011 թվականներին Գեղարքունիքի մարզում աշխատանքի է տեղավորվել շուրջ **1260 գործազուրկ**, ընդ որում, ավելի քան 80 տոկոսը՝ մասնավոր հատվածում:

2010 թվականին Գեղարքունիքի մարզում շուրջ 70 միլիարդ ընդհանուր ծավալով վարձատրվող հասարակական աշխատանքներում ընդգրկվել է ավելի քան **830 գործազուրկ**:

Կրթությունը

Գեղարքունիքի մարզում 2010 թվականին Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակը 2001 թվականի համեմատ **ավելացել է** մեկ հինգերորդով:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների քանակը Գեղարքունիքի մարզում




2010 թվականին Գեղարքունիքում մեկ նախադպրոցական հաստատություն միջին հաշվով հաճախել է մեկ երրորդով ավելի շատ երեխա, քան 2002 թվականին:

Գեղարքունիքի մարզում տարեց-տարի ավելացել է երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների թիվը. եթե 2001/2002 ուսումնական տարում Գեղարքունիքում գործում էր երաժշտական, արվեստի և գեղարվեստի 7 դպրոց, ապա 2010/2011 ուսումնական տարում՝ 17: 2001-2010 թվականների ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզի համայնքներում գործող երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների թիվն **ավելացել է շուրջ երկուսուկես անգամ**: Նույն ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզում գործող երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում սովորողների թիվն **ավելացել է շուրջ 90 տոկոսով**:


2010/2011 ուսումնական տարում Գեղարքունիքի մարզում գործող երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում վճարովի ուսուցման համակարգում սովորողների թվաքանակը 2001/2002 ուսումնական տարվա համեմատ ավելացել է 2.8 անգամ՝ ավելի շատ, քան հանրապետության որևէ այլ մարզում կամ մայրաքաղաք Երևանում:

Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների թվաքանակը Գեղարքունիքի մարզում (միավոր)



2010 թվականին Գեղարքունիքի մարզում գործել է Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական **կրկնակի ավելի** շատ հաստատություն, քան 2008 թվականին:

2010 թվականին Գեղարքունիքի մարզի արհեստագործական ուսումնական հաստատություններում սովորում էր մեկուկես անգամ ավելի շատ ուսանող, քան 2008 թվականին:




2010 թվականին Գեղարքունիքի արհեստագործական ուսումնական հաստատություններ ընդունվել է մեկ քառորդով **ավելի շատ** ուսանող, քան 2008 թվականին: Ընդ որում, 2010 թվականին Գեղարքունիքում արհեստագործական ուսումնական հաստատություններ ընդունված ուսանողներն ընդգրկվել են բացառապես ուսուցման անվճար համակարգում:

2010 թվականին Գեղարքունիքի մարզի արհեստագործական ուսումնական հաստատություններում դասավանդող մանկավարժների թիվը 2008 թվակա-

2010/2011 ուսումնական տարում Գեղարքունիքի մարզի երկու բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էր գրեթե եռապատիկ ավելի շատ ուսանող, քան 2002/2003 ուսումնական տարում մարզի չորս բուհերում:


Նի համեմատ **մեկ երրորդով ավել էր**: 2010 թվականին արիեստագործական ուսումնական հաստատություններում դասավանդող մանկավարժների թվով Գեղարքունիքը հանրապետության մարզերի թվում զիջում էր միայն Շիրակին և Կոտայքին:

Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածների թվաքանակը Գեղարքունիքի մարզում (մարդ)



2007-2011 թվականներին Գեղարքունիքի մարզում կատարված կապիտալ ներդրումների շուրջ մեկ քառորդն ուղղվել է կրթական հաստատությունների զարգացմանը:

Կրթությանն ուղղված կապիտալ ծախսերի բաժինը 2007-2011 թթ. Գեղարքունիքում իրականացված կապիտալ ծախսերի ընդհանուր ծավալում





Գավառի պետական համալսարանի ուսանողական առօրյան

2007-2011 թվականներին Գեղարքունիքի **քաղաքային հինգ** և **գյուղական շուրջ քառասուն** համայնքներում կառուցվել և հիմնանորոգվել են նախադպրոցական, հանրակրթական, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:

2007-2011 թվականներին հիմնանորոգվել են **Գանձակ, Լճաշեն, Չովաբեր, Լանջաղբյուր, Նորատուս, Դղմաշեն, Գեղհովիտ, Ձորագյուղ, Վերին Գետաշեն** համայնքների մանկապարտեզները: 2012 թվականին **Ծովագյուղ** համայնքում կվերաբացվի մանկապարտեզը:

2007-2011 թվականներին հիմնանորոգվել են դպրոցներ **Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան, Ճամբարակ, Մեծ Մասրիկ, Սեմյոնովկա, Վահան, Վարսեր, Մաքենիս, Կարմիրգյուղ, Ծովագարդ, Վարդաձոր, Երանոս, Թթուջուր, Սարուխան, Գանձակ, Գեղահովիտ, Ձորագյուղ, Վերին Գետաշեն, Լուսակունք, Ներքին Գետաշեն, Հայրավանք, Լանջաղբյուր, Սոթք, Վարդենիկ, Ծովագյուղ, Արծվանիստ, Ծովինար, Լիճք, Ակունք, Նորատուս, Գեղամավան, Չոլաբար, Վաղաշեն** համայնքներում, **Գավառի** պետական գյուղատնտեսական ֆոլեջը, **Մարտունու** պետական ֆոլեջը:

2009 թվականին **Ծովասար** համայնքում կառուցվել և կահավորվել է «Բախտիբեկ Մուրադյանի» անվան միջնակարգ դպրոցը:



Ծովասարի Նորակառույց դպրոցը



2011 թվականին Գեղարքունիքում գործող 47 մանակապարտեզներից 22-ը գործել է շուրջտարի:

2011 թվականին Գեղարքունիքի մարզում ավելի քան **60 դպրոց ջեռուցվել է** բնական գազով աշխատող անհատական կաթսայատան միջոցով, վեցը՝ ջեռուցվել է էլեկտրաէներգիայով, 51-ը՝ հեղուկ, իսկ 8-ը՝ խառը վառելանյութով:

2011 թվականին Գեղարքունիքի մարզի **Վերին Գետաշեն, Գեղամավան և Նորատուս** համայնքներում դպրոցները հագեցվել են համակարգիչներով: 2011 թվականին Գեղարքունիքի մարզում 125 դպրոց ուներ շուրջ **1,100 համակարգիչ** և համակարգչային սարքավորում, շուրջ 120 դպրոց միացած է համացանցին: 2012 թվականին ինտերնետային կապով կապահովվի Մեծ Մասրիկի տարրական դպրոցը:

2011 թվականին Շարժական ինտերնետային-համակարգչային կայանը **Փամբակ, Դարանակ և Գետիկ** համայնքների աշակերտների և ուսուցիչների համար ինֆորմատիկայի դասընթացներ է անցկացրել:

2010 թվականին Գեղարքունիքի մարզում վերապատրաստվել է շուրջ **1,450 ուսուցիչ**: 2010-2011 թվականներին

Գեղարքունիքի մարզում ուսուցիչների միջին աշխատավարձը կազմել է ավելի քան 130 հազար դրամ:

2010 թվականին Գեղարքունիքում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դպրոց ընդգրկելու նպատակով շուրջ **320 երեխա** ստացել է հագուստ և գրենական պիտույքներ, ինչի արդյունքում մարզի դպրոցահասակ բոլոր երեխաները հաճախել են դպրոց:

2010 թվականին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 15-ամյակին նվիրված շարադրությունների մրցույթում հաղթող է ճանաչվել Սևանի թիվ 7 միջնակարգ դպրոցի իններորդ դասարանի աշակերտուհի **Արփինե Ղազարյանը**:

2012 թվականին Գեղարքունիքի մարզում մասնագիտական կրթության առաջատար Գավառի պետական համալսարանը Հայաստանի Հանրապետության մարզերում գործող բուհերի շարքում **առաջինն է** աշխարհի շուրջ 20,000 համալսարանների վեբոմետրիքս դասակարգման (Webometrics Ranking of World Universities) արդյունքներով:

2011 թվականին **«Կտոր մը Հայրենիք»** երիտասարդական հայագիտական հետազոտությունների, շարադրությունների, ստեղծագործությունների մրցույթում Գավառի պետական համալսարանի ներկայացուցիչները նվաճել են առաջին, երկրորդ և երրորդ մրցանակներ:

2012 թվականին Համաշխարհային բանկի կողմի **«Հայկական գյուղը 21-րդ դարում»** թեմայով ակնարկների մրցույթում երրորդ մրցանակային տեղը նվաճել է Գավառի պետական համալսարանի ուսանողուհի **Սաթենիկ Մարտիրոսյանը**: Համալսարանի առաջին կուրսի ուսանողուհի Ռուզաննա Ասատրյանը շնորհակալագրի է արժանացել NASDAQ OMX-ի կողմից հայտարարված «Արժեթղթերի առաջնային տեղաբաշխման խնդիրները և դրանց լուծման հնարավորությունները Հայաստանի կապիտալի շուկայում» թեմայով մրցույթում: 2011 թվականին **«Բիզնես գրավչության իմ բանաձևը»** ուսանողական մրցույթում Գավառի պետական համալսարանի ուսանողները նվաճել են երեք մրցանակային տեղերից երկուսը:



Ավագյան Սաթիկը սովորում է Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի, անգլերեն լեզվի բաժնում, չորրորդ կուրսում: Ավագյանների ընտանիքը երկար տարիներ ապրել է Ռուսաստանում: 2007 թվականին վերադառնալով հայրենի քաղաք, Սաթիկն ավարտում է միջնակարգ դպրոցը և որոշում բարձրագույն կրթություն ստանալ Գավառի պետական համալսարանում: «Ես ունեի հնարավորություն վերադառնալ Չիտա, որտեղից եկել էի ու այնտեղ շարունակել կրթությունս, բայց գերադասեցի իմ հայրենիքը, մանավանդ, որ դպրոցն այստեղ ավարտելու միտքն էլ է իմն եղել»,– ասում է Սաթիկ Ավագյանը:

Սաթիկի կարծիքով երիտասարդության հոսքը Երևան այնքան էլ ճիշտ չէ: Այդպես մյուս քաղաքները դատարկվում են, կադրային «դիֆիցիտ» է ստեղծվում, խախտվում է համաչափությունը: «Իսկ ինչու մարզի բնակիչը չմնա և չսովորի տեղի բուհում, ինչու գնա հասնի մայրաքաղաք: Պետք է այստեղ կրթություն ստանալ, անել ներդրում սեփական բուհում: Ես կարծում եմ, որ մեր գավառցի աշակերտները պիտի այստեղ բացահայտեն իրենց ունակությունները, պիտի աշխատենք, որպեսզի մեր համալսարանի համբավն ավելի բարձրանա,– բացատրում է Սաթիկը,– բացի այդ, մեր դասախոսները շատ սրտացավ են ուսանողների նկատմամբ: Մենք բոլորս կարծես մի թիմ լինենք ու ուսանող լինի, թե դասախոս մտածում ենք մեր քաղաքի, մեր համալսարանի համբավի մասին»:


Որպես առավելություն Սաթիկը հիշատակում է համալսարանում վերջերս ստեղծված համակարգչային լսարանի մասին, որտեղ բուհի ուսանողները հնարավորություն ունեն իրենց ռեֆերատները, կուրսային աշխատանքները գրելու, օգտվելու ինտերնետից: Սաթիկն այս տարի ավարտում է Գավառի պետական համալսարանը: Իրեն մրցունակ մասնագետ է համարում և վստահ է, որ ցանկության դեպքում կարող է աշխատանք գտնել անգամ մայրաքաղաքում:

«Ես հիմա էլ ունեմ բուհի ուսանողներից կազմված մի խումբ, որ անվճար անգլերեն եմ պարապում, և եթե ինձ առաջարկեն դասախոսել համալսարանում ավարտելուց հետո, կարծում եմ սիրով կհամաձայնվեմ: Իսկ իրականում այդ ուղղությամբ այնքան էլ չեմ մտածում, կարևորը, որ գիտեմ լավ մասնագետ եմ դառնալու և վստահ եմ, որ Գավառի պետական համալսարանի պատիվը բարձր եմ պահելու ուր էլ որ գնամ աշխատելու»,– հավելում է Սաթիկ Ավագյանը:

Առողջապահությունը

Գեղարքունիքի մարզում 2003-2010 թվականներին բժիշկների թվաքանակն **ավելացել է** մեկ հինգերորդով: 2010 թվականին Գեղարքունիքի մարզում բժիշկների թվաքանակը տասը հազար բնակչի հաշվով, 2003 թվականի համեմատ, **ավելացել է** շուրջ մեկ հինգերորդով:

Հիվանդանոցային մահճակալների քանակը Գեղարքունիքի մարզում (հատ)




2010 թվականին Գեղարքունիքի մարզում հիվանդանոցային մահճակալների քանակն **ավելացել է երկու երրորդով**: 2010 թվականին տասը հազար բնակչի հաշվով, հիվանդանոցային մահճակալների թվով Գեղարքունիքը Յայաստանում **զիջում էր միայն մայրաքաղաք Երևանին**: 2010 թվականին Գեղարքունիքի մարզում հիվանդանոցային մահճակալների թիվը տասը հազար բնակչի հաշվով, 2001 թվականի համեմատ, **ավելացել է** 90 տոկոսով:

2003-2010 թվականներին Գեղարքունիքում շուրջ մեկ յոթերորդով **ավելացել է** ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը: 2010 թվականին Գեղարքունիքի մարզում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը տասը հազար բնակչի հաշվով 2001 թվականի համեմատ **ավելացել է 30 տոկոսով**:

Գեղարքունիքի մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում տարեց-տարի **ավելացել է** հաճախումների քանակը. 2010 թվականին

Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը Գեղարքունիքի մարզում (միավոր)



Գեղարքունիքում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում 2004 թվականի համեմատ հաճախումների թիվն **ավելացել է 70 տոկոսով**:

2010 թվականին Գեղարքունիքի մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում մեկ շնչի հաշվով հաճախումների քանակը 2004 թվականի համեմատ **ավելացել է 70 տոկոսով**, իսկ 2007 թվականի համեմատ՝ մեկ վեցերորդով:

2010 թվականին Գեղարքունիքի մարզում մեկ բնակչի հաշվով առաջացած թափոնների ծավալը կրարատի մարզից հետո հանրապետությունում **ամենաքիչն էր**: 2003 թվականի համեմատ Գեղարքունիքի մարզում մեկ բնակչի հաշվով առաջացած թափոնների ծավալը Գեղարքունիքում նվազել է ավելի քան երկուսուկես անգամ:

2007-2011 թվականներին վերանորոգվել են հիվանդանոցները **Մարտունի, Վարդենիս, Սևան և Վարդենիկ** համայնքներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններ՝ **Սարուխան, Ծովագյուղի և Վաղաշեն** համայնքներում, իսկ **Լուսակունք, Աստղածոր և Ծովասար** համայնքներում կառուցվել են առողջության առաջնային պահպանման կենտրոններ, հիմնանորոգվել է **Սևանի** հոգեբուժական հիվանդանոցը:

2009 թվականին Լիճք համայնքում գործարկվել է **«Բի Բի Ջի»** նորակառույց մասնավոր բժշկական կենտրոնը, որը արտահիվանդանոցային և



«ԲԻ ԲԻ ԶԻ» Նորակառույց մասնավոր բժշկական կենտրոնը Լիճքում

հիվանդանոցային ծառայություններ է մատուցում բնակչությանը՝ ինչպես տեղի մասնագետների, այնպես էլ մայրաքաղաքից հրավիրված բժիշկների միջոցով: Կենտրոնը տրամադրում է արտահիվանդանոցային-ամբուլատոր և հիվանդանոցային-ստացիոնար ծառայություններ: Բժշկական կենտրոնի կառուցման և սարքավորումների ձեռքբերման համար ներդրվել է շուրջ **2 միլիարդ դրամ**: Կենտրոնն ունի 75 աշխատող:

2011 թվականին վերաբացվեց **Գավառի** հիմնանորոգված բժշկական կենտրոնը, ընդհանուր առմամբ, վերանորոգվել ու կառուցվել է շուրջ 3,900 քառակուսի մետր մակերեսով տարածք, կատարվել է մասնաշենքի ամբողջական հիմնանորոգում: Կենտրոնը հագեցած է Նորագույն բժշկական սարքավորումներով, բժշկական ու կենցաղային նոր կահույքով: Կենտրոնում աշխատում են **35 բժիշկներ, 69 բուժքույրեր, 60 սպասարկող աշխատակիցներ**: Գավառի ծննդատան շենքում կլինի **80 մահճակալ**, որից վիրաբուժական՝ 25, թերապևտիկ՝ 15, մանկական՝ 10 և մանկաբարձագինեկոլոգիական՝ 30: 2012 թվականից բժշկական կենտրոնի հետագա բարելավումը շարունակվելու է. շենքի երեսպատում՝ ջերմամեկուսացման նպատակով, տարածքի բարեկարգում, արտաքին լուսավորություն, հինգ մահճակալանոց ինֆեկցիոն բաժանմունքի տեղակայում տնտեսական մասնաշենքում, դիախերձարանի կառուցում:

2011 թվականին բացվեց **Սևան** քաղաքի հիմնանորոգված պոլիկլինիկան, որն ապահովված է ջեռուցման համակարգով, ստեղծված են անհրաժեշտ բոլոր



«Մեր բժշկական կենտրոնը միաժամանակ կարող է սպասարկել 50 հիվանդի: Առաջ այստեղ ամալի տարածք էր, իսկ այժմ ժամանակակից բժշկական կենտրոն՝ տեխնիկական մեծ հագեցվածությամբ»:

Ռուբեն Սիմոնյան, «ԲԻ ԲԻ ԶԻ» բժշկական կենտրոնի գլխավոր բժիշկ



Գավառի վերաբացված
բժշկական կենտրոնը



Սևանի հիմնաևորոգված
պոլիկլինիկան

պայմանները, հատկացվել է **44 միլիոն դրամի** բժշկական սարքավորումներ և գույք:

2011 թվականին **Գավառում** կրաբկիր բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի բացման արդյունքում, մարզի բնակիչներին հասանելի են դարձել հատուկ կարիքներով երեխաների զարգացման գնահատումը, ինդիվիդուալ վաղ հայտնաբերումը և բուժումը:

2010 թվականին **Մարտունու** ծննդատանը վերանորոգվել և կահավորվել է Մայրական դպրոցը, որը կրթում է ապագա մայրերին:

2010-2011 թվականներին Գեղարքունիքում վերապատրաստվել և անհրաժեշտ գրականությունով են ապահովվել ծննդօգնության, նախածննդյան և հետծննդյան խնամք իրականացնող բուժանձնակազմերը: Միայն 2010 թվականին Գեղարքունիքի մարզում վերապատրաստվել և ընտանեկան բժշկի որակավորում են ստացել մարզի առաջնային բուժօգնության 3 բժիշկ և 12 բուժքույր:

2011 թվականին Գեղարքունիքի մարզում ծննդօգնության հավաստագրերի ներդրումից հետո խիստ **քարճրացել է** հղիների ընդգրկվածությունը և որակյալ ծննդօգնության իրականացումը: Կատարված աշխատանքների արդյունքում 2006-2011 թվականներին Գեղարքունիքում մայրական մահացության դեպք չի եղել:

Երեքամյա Յովսեփին բարձր ջերմությամբ Գավառի բժշկական կենտրոն հասցրել էին տատիկն ու պապիկը: Երեխան հանկարծակի ցնցումների մեջ էր ընկել՝ անակնկալի բերելով հարազատներին: «Բալիս ուղղակի փրկեցին բժիշկները,– ասում է տղայի պապիկը: Յովսեփիկի մայրը՝ քսաներեքամյա Արմինե Ղռեջյանը շատ գոհ է բժշկական կենտրոնի թե՛ պայմաններից, թե՛ իրենց սկատմամբ ցուցաբերած վերաբերմունքից:




«Ես ծննդաբերել եմ այս հիվանդանոցում, առաջ սա միայն ծննդատուն էր, հիմա է, որ վերանորոգել են, վերակառուցել են ու դարձրել են կենտրոն: Մի քանի տարի առաջ, որ գայիք Եստեղ ու ասենք հիմիկվա պայմանները համեմատեք, ուղղակի անհնար է համեմատել,– ասում է Արմինե Ղռեջյանը,– շենքը հին էր, սանհանգույց չկար ներսում, հեռուստացույց չկար առաջ պալատներում, հիմա կա, մաքուր է ամեն ինչը ու մի տեսակ, ճիշտ է, հիվանդանոց է կոչվում, բայց որ ամեն ինչը տեղը տեղին է, դու էլ արդեն չես նեղվում եղ բառից, քո համար էլ մի տեսակ հաճելի է Եստեղ գտնվելը»:

Մշակույթն ու սպորտը

Գեղարքունիքի մարզում 2010 թվականին գործող թանգարաններում ցուցադրությունների քանակն **ավելին էր, քան երբևէ** նախորդ տարիներին: 2010 թվականին Գեղարքունիքի թանգարաններում ցուցադրությունների քանակը 2006 թվականի համեմատ **տասնապատիկ է**:


2010 թվականին Գեղարքունիքի մարզում գործել է ինը մարզական կազմակերպություն՝ երկուսով ավելի, քան 2004 թվականին: 2010 թվականին Գեղարքունիքի մարզում գործել է շուրջ մեկուկես անգամ ավելի շատ մարզա-

Ցուցադրումների քանակը Գեղարքունիքի մարզում



կան խմբակ, քան 2007 թվականին: 2010 թվականին Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքներում գործող մարզական խմբակների քանակը 2006 թվականի համեմատ **կրկնակի ավելացել է:**

Մարզական կազմակերպությունների և խմբերի քանակը Գեղարքունիքի մարզում



2010 թվականին Գեղարքունիքի մարզում մարզիկների թվաքանակը 2007 թվականի համեմատ **ավելացել է** մեկ քառորդով, ընդ որում, մարզի քաղաքային համայնքներում, նույն ժամանակահատվածում մարզիկների թիվն ավելացել է մեկ երրորդով:

2010 թվականին Գեղարքունիքի մարզում մարզիկների թվաքանակը 2007 թվականի համեմատ ավելացել է մեկ հինգերորդով:

2007-2011 թվականներին Գեղարքունիքի մարզի քաղաքային և գյուղական **շուրջ քառասուն համայնքներում** կառուցվել, հիմնանորոգվել և վերակառուցվել են մշակութային և մարզական բազմաթիվ հաստատություններ. հիմնանորոգվել և կահավորվել են **Ճամբարակի** գրադարանը, մշակույթի տներ **Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սարուխան, Ծովասար, Այգուտ, Չկալովկա, Լճափ, Երանոս, Գանձակ, Ակունք, Կարմիրայուղ, Լճաշեն, Ծափաթաղ, Չուլաբար, Գեղամավան, Վարդենիկ, Լուսակունք, Կարճաղբյուր, Վաղաշեն** համայնքներում, վերակառուցվել է **Վարդենիսի** Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատը, **Վարդենիկի** երաժշտական դպրոցը, **Լճաշեն** ամրոցը, **Գավառում** հիմնանորոգվել են Վարդգես Պետրոսյանի անվան Գեղարքունիքի



Նորակառույց մշակույթի տունը Շովասարում



Բաշինջաղյան թեյատունը Սևանա լճի ափին

մարզային գրադարանը, **Գավառի** թատրոնը, Ուսուցողական կենտրոնի քաղաքային գրադարանը, **Գավառի** երաժշտական ուսումնարանը, արվեստի դպրոցը, **Լիճք** համայնքում կառուցվել է մշակույթի տուն:

2007-2011 թվականներին **Փամբակ, Դրախտիկ, Արեգունի, Կարճաղբյուր, Ձորագյուղ, Մաղինա** համայնքներում կառուցվել և հիմնանորոգվել են համայնքային կենտրոններ, մարզադպրոցներ են հիմնանորոգվել **Գավառ, Վարդենիս, Մարտունի** և **Ճամբարակ** համայնքներում:

2011 թվականին Հանրապետական ասմունքի մանկապատանեկան երրորդ և չորրորդ մրցույթ-փառատոններում, Մարտունու թիվ 3 դպրոցի աշակերտուհի **Սիլվա Ավագյանը** և Շովազարդի միջնակարգ դպրոցի աշակերտուհի **Երանուհի Բալեյանը** հանրապետական փուլում արժանացան խրախուսական մրցանակների:

2011 թվականին Հեթիաթասացության և բարբառի երրորդ մրցույթ-փառատոնի հանրապետական փուլում Գեղարքունիքի մարզի բնակիչ **Գրետա Խանդանյանը** նվաճեց երկրորդ մրցանակ:

2011 թվականին մանկապատանեկան թատերական **«Նռան հատիկ»** փառատոնում Գեղարքունիքի մարզի չորս մանկական թատերախմբեր ստացել են խրախուսական մրցանակներ և շնորհավորագրեր:

2011 թվականին **«Երգող Հայաստան»** մանկապատանեկան երգչախմբերի



**Գավառի Աուրբ Աստվածածին
եկեղեցին, XVIII դ.**



**Հայրավանքի Ս. Ստեփանոս
եկեղեցին, VIII դ.**

հինգերորդ հոբեյանական հանրապետական մրցույթի հանրապետական փուլում **Սևանի** և **Գավառի** երաժշտական դպրոցները նվաճել են երրորդ մրցանակ, իսկ Գավառի երաժշտական դպրոցի սան Արփի Լազարյանը «Լավագույն մենակատար» անվանակարգում նվաճել է հաղթողի կոչում:

2011 թվականին **«Ճանապարհի դեպի վանք»** պատանեկան նկարչական փառատոնի հանրապետական փուլում Գավառի ուսուցողական կենտրոնի սան **Կարինա Գորոյանը** նվաճել է երկրորդ մրցանակ:

2010 թվականին Հայաստանի Հանրապետության Անկախության 19-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 19-րդ մարզական խաղերի շրջանակում Գեղարքունիքի մարզի վոլեյբոլի տղաների թիմը եզրափակիչ փուլում գրավեց չորրորդ տեղը, ձեռքի գնդակի հավաքականը և ֆուտբոլի «Ալաշկերտ» թիմն արժանացան մրցանակների:

2010 թվականին Հայաստանի Հանրապետության գավաթի խաղարկության, Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղերի եզրափակիչում **Կարճաղբյուրի** մարզադպրոցի հավաքականը նվաճեց երկրորդ մրցանակ:


2011 թվականին **Սևանի** մարզադպրոցի վոլեյբոլի աղջիկների թիմը ՀՀ առաջնության մրցումներում գրավեց երկրորդ, իսկ ձեռքի գնդակի պատանիների հավաքականը՝ երրորդ մրցանակ:

Սոցիալական վիճակը

Գեղարքունիքի մարզում ընդհուպ մինչև 2007 թվականը տարեց-տարի **կրճատվել է** աղքատության մակարդակը. 2001-2007 թվականներին Սյունիքում աղքատության մակարդակը կրճատվել էր **ավելի քան կիսով չափ**: Ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հետևանքով հետագա տարիներին աղքատության մակարդակը Գեղարքունիքում ցավալիորեն բարձրացավ: Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ աղքատության հաղթահարմանն ուղղված թիրախավորված քաղաքականության արդյունքում, Գեղարքունիքի մարզում շատ աղքատ տնային տնտեսությունների թիվը 2010 թվականից նվազում է: 2010 թվականին Գեղարքունիքում շատ աղքատ տնային տնտեսությունների թիվը 2009 թվականի համեմատ կրճատվել է ավելի քան մեկուկես անգամ:

Գեղարքունիքի մարզում **ցածր է** հանցագործության մակարդակը: 2011 թվականին Գեղարքունիքը՝ Տավուշի և Արմավիրի հետ մեկտեղ ձևավորում էր հանրապետության ամենացածր հանցավորություն ունեցող մարզերի եռյակը:

2010 թվականին Գեղարքունիքի մարզում գրանցված հանցագործությունների թիվը 10,000 բնակչի հաշվով ամենացածրն էր հանրապետությունում:



2011 թվականին Գեղարքունիքի մարզում գրանցված հանցագործությունների թիվը 10,000 բնակչի հաշվով գրեթե **60 տոկոսով պակաս էր**, քան միջինը հանրապետությունում և **2.4 անգամ պակաս**, քան մայրաքաղաք Երևանում: 2011 թվականին Գեղարքունիքի մարզում 10,000 բնակչի հաշվով գրանցվել է ավելի քան 2.2 անգամ քիչ հանցագործություն, քան հարևան Վրաստանում:

2010-2011 թվականներին Գեղարքունիքի մարզում Յայրենական մեծ պատերազմի շուրջ **370 վետերանի** փոխհատուցում է տրվել նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՅՍԽՅ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների դիմաց:

2010-2011 թվականներին Գեղարքունիքի հինգ քաղաքներում գործել են բարեգործական **3 ճաշարան**՝ 250 շահառուներով:

2010-2011 թվականներին Գեղարքունիքի մարզում բնակարան ձեռք բերելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն է ստացել զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների **յոթ ընտանիք**:

2010-2011 թվականներին Գեղարքունիքի մարզի **430 առավել անապահով**, զոհված և վիրավոր ազատամարտիկների, ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքների երեխաներ անվճար հանգստացել են Հանքավանի մանկական ամառային հանգստյան ճամբարներում:

2010-2011 թվականներին Գեղարքունիքի մարզում շուրջ **3,000 առաջին դասարանցի երեխա** ստացել է ընդամենը շուրջ 173 միլիոն դրամ ծավալով օգնություն:

2011 թվականին Գեղարքունիքում անչափահասների կողմից կատարված հանցագործությունների քանակը 2010 թվականի համեմատ **նվազել է** ավելի քան 40 տոկոսով:

2012 թվականի տարեսկզբին Գավառում թափառաշրջիկ երեխաներ **չեն եղել**:



Չկալովկա գյուղի տասնամյա բնակիչ Ռաֆայել Հունանյանն արդեն երկրորդ նամակն է ուղարել երկրի Նախագահ Սերժ Սարգսյանին ու խնդրել իրեն համակարգիչ նվիրել: Տղան համակարգչային խաղեր խաղալու համար մեկ-մեկ հարևանի տուն է գնում: «Բայց մենակ խաղալը չի, – շտապում է տեղեկացնել Ռաֆայելը, – որ համակարգիչ ունենամ, հետո կարող եմ ավելի շատ տեղեկություններ ստանալ, ավելի շատ բան սովորել: Ուղղակի պապայիս աշխատավարձով հնարավոր չէր գնել, դրա համար էլ մեր Նախագահին եմ խնդրել»:

Նախագահ Սերժ Սարգսյանին Ռաֆայելն առաջին անգամ նամակ գրել էր, երբ ութ տարեկան էր: Որքան էլ որ տարօրինակ է, բայց տղան Նախագահից ընդամենը երկրի դրոշն էր ուզել: «Ուզել էի էն դրոշից, որ իրա կաբինետում է դրված, – պատմում է Ռաֆայելը, – ինձ էկքան է դուր գալիս մեր դրոշը, իրա գույները, որ ուզեցի անպայման մեր տանը մեծ ունենամ դրած»: Ռաֆայելի մայրը լրացնում է տղայի պատմությունն ասելով, որ տառաճանաչ տղան նամակը գրել է ավագ քույրերի օգնությամբ: Նամակն ուղարկել են, իսկ մեկ ամսից արդեն հյուրասենյակի անկյունում իր պատվավոր տեղն է գրավել երկրի գլխավոր խորհրդանիշերից մեկը: Բացի դրոշից տղան երկրի Նախագահից նվեր էր ստացել նաև մանկական հանրագիտարան և Աստվածաշունչ:

«Գյուղապետարանից, դպրոցից հետո եկան, Էսպես կատակով, համոզում էին, թե Ռաֆայել ջան դրոշը տուր տանենք, չտվեց, – ծիծաղում է տիկին Գայանեն, – ինքն ամեն անգամ հեռուստացույց նայելուց ասում էր, թե մամ ջան, ես անպայման ուզում եմ մեր դրոշից ունենամ, թող քույրիկներս օգնեն, նամակ գրեմ ուղարկեմ պարոն Սերժ Սարգսյանին: Հիմա, երբ ունի, հենց Նախագահի կաբինետը ցույց են տալիս, ուրախանում է, ասում է, մամ ջան

գիտես չէ, ես դրոշից մենակ ես ու Սերժ Սարգսյանն ունենք: Իսկ երկրորդ նամակը տղաս ինքնուրույն է գրել: Ռաֆայելը հինգերորդ դասարանում է սովորում, շատ լավ է սովորում, դրսերում Էդքան խաղալու հավես չունի: Մեկ-մեկ հարևանի տուն է գնում կոմպյուտերով ընկերոջ հետ խաղալու, Էդ է: Հիմա մի ամիս առաջ ուղարկել ենք նամակը Նախագահին, պատասխան ունենք, որ նամակը ստացվել է, մտածում ենք, որ Նախագահը չի մերժի տղայիս խնդրանքը»:

Տասնամյա Ռաֆայելը դեռ չգիտի ինչ մասնագիտություն է ընտրելու ապագայում, բայց ասում է, որ ուզում է շատ լավ մարդ դառնալ: Տղան դպրոցում ամենաշատը սիրում է մայրենիի և նկարչության դասաժամերը: Տանը դասապատրաստումից ազատ ժամերին սիրում է մուլտիերոսներին նկարել: Ռաֆայելի մյուս երազանքը նկարչական դպրոցում սովորելն ու նկարչության համար անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելն է: «Եթե շատ նեղը ընկնեմ, էլի կդիմեմ իմ Նախագահին, – ասում է Ռաֆայելը, – ծնողներիցս հետո ամենահարազատ մարդն ինձ համար ինքն է»:

Դարից-դար կրկին ու կրկին պատմում են իրենց հիշողությունները Գեղարքունիքի կոթողները հայի սերունդներին: Պատմում են այն օրերի մասին, երբ Գեղամա ջահել ծովը դեռ ցամաք էր: Դամբարանաքարերը մոռցում են, թե ինչպես խաչքարերի անտառը հեռավոր մի օր, չկարողացավ այլևս անմասն մնալ իր կազմողների տառապանքին, զորականի զգեստ հագավ, և զարհուրեց նվաճողն ու ընկրկեց: Վանքերի վիմագրությունները հպարտանում են, թե ինչպես մատուռն ու առաջնորդների ինքնագոհությունը մի ողջ գյուղ փրկեցին: Հայրավանքի ժայռեղեն հրվանդանը տնքում է Լենկթեմուրի վայրագությունից բազում կյանքեր փրկած Մարդաղավնյաց վանահոր հավատի զորության պատմությունը:

Պատմում են Շողոգավանքն ու Կոթավանքը, պատմում են Մասրուց Անապատն ու Վանեվանը, մրմնջում են մայրասիրտ եկեղեցիներն ու երգում է Ծաղկավանքի մամուռը՝ բախտն իր բախտին հյուսած աղջկա մասին: Խոսում է Մաքենյաց վանքի գավիթը, թե ինչպես ուսանեց Հովհաննես Դրասխանակերտցին իր սյուների տակ: Սևանա վանքի քարերը հուզախոռով ափսոսանքով հիշում են տապաված մեհյանն ու փառաբանում Մարիամ իշխանուհու նվիրվածությունն իր երկրին ու անսահման հավա-

տարմությունը՝ հավատին: Մայրական սիրո ու հոգատարության ձոնն է երգում գրեթե ամեն կոթող Գեղարքունիքում:

Սևանի ջրերն ափին զարնվող ամեն ալիքի հրճվանքով ճչում են հայրենի բնաշխարհն ու մարդուն անմնացորդ սիրող մերօրյա նվիրյալների հավատով ու հետևողականությամբ նոր կյանք առած գեղեցկագույն լճի հարատևության ավետիսը:

Կրկնում են ու կրկնում լիճ ու լեռ, կոթող ու տաճար իրենց պատմությունները, կրկնում են, որ չմոռանան, կրկնում են, որ մարդը հիշի: Ավելանում են պատմությունները դարից-դար և տարուց-տարի: Ավելանում են մարդու արյամբ ու քրտինքով, մարդու հավատով ու նվիրումով: Եվ գալիք մի օր, Սևանի ջրերով վազող լույսի կաճանը լուսնագարդ գիշերվա խաղաղ շշուկում կպատմի, թե ինչպես իր հողին կրկին տիրացավ արծվաշենցին, ու իրենց օջախները դարձան գեղարքունիքի բոլոր զավակները:

Չայահոտ անցյալով լցված ու հայագույն գալիքի փայլով շլացնող գեղարքունյաց լեռները կհիշեցնեն սերունդներին հարատևության խորհուրդը: Կպատմեն խորհուրդը կյանքի, որպես հայախոս հայտնություն, որ հաստատում է իրեն վերստին, ու անցյալը հյուսում գալիքին:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Գեղարքունիքի մարզում առավել նկատելի ձեռքբերումները տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Գրքույկը ներկայացնում է նշված ժամանակահատվածում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար խիստ բացասական հետևանքներ թողած համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հաղթահարման ընթացքն ու արդյունքները: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերն ու դրանց արդյունքները՝ ուղղված հանրային և մասնավոր հատվածների, հասարակական և բարեսիրական կառույցների, ինչպես նաև զարգացման միջազգային գործըկերների՝ ճգնաժամի պայմաններում սուղ միջոցների և մասնատված ուժերի համախմբանն ու արդյունավետ օգտագործմանը՝ ի շահ Գեղարքունիքի մարզի տնտեսության և բնակիչների: Գրքույկի գլխավոր հերոսը գեղարքունիքցին է, ում ստեղծագործ ուժն ու եռանդը, լավատեսությունը, դրական փոփոխությունների հանդեպ հավատն ու դրանց հասնելու վստահությունը՝ հնարավոր են դարձրել այն բոլոր ձեռքբերումները, որոնք ներկայացված են գրքույկում: